

ՄՏՈՐԵՐԿՐՅԱ ՔԱՂՑՐԱՀԱՄ ՋՐԵՐ

Միջավայրի պայմանների և մարդու առողջության վրա բացասաբար ազդող ֆիզիկական, քիմիական և կենսաբանական աղտոտիչների թափանցումը, առաջացումն ու կուտակումը բնական ջրերում կոչվում է ջրի աղտոտում: Ջրի աղտոտման աղբյուրները հետևյալն են.

- կենցաղային հոսքաջրերը.
- արդյունաբերական հոսքաջրերը.
- ձնհալի և անձրևների ժամանակ հողահանդակներից տեղափոխված պեստիցիդները.
- բնակավայրերից վնասակար նյութերը.
- անձրևի և ձյան միջոցով՝ մթնոլորտից անջատվող աղտոտող նյութերը:

Աղտոտման աղբյուրները կարող են լինել ինչպես կետային, այնպես էլ ցրված: Կենցաղային հոսքաջրերը հիմնականում աղտոտված են լինում կենսածին նյութերով, արդյունաբերական հոսքաջրերը՝ առավել հաճախ նավթամթերքներով, ֆենոլներով, ծանր մետաղներով (կապար, կադմիում, պղինձ, ցինկ և այլն) և բարդ օրգանական միացություններով (սինթետիկ լվացամիջոցներ, ներկեր, ճարպեր), որոնք վատթարացնում են ջրի որակը, խմելու և սննդի մեջ օգտագործելու համար դարձնում ոչ պիտանի, խախտվում են ջրային ավազանի կենսաբանական շարժընթացները, նվազում է աղտոտող նյութերից ջրի ինքնամաքման հատկությունը, փոխվում է ջրային կենսաբանականության կազմն ու սննդային արժեքը: Կենցաղային հոսքաջրերը հիմնականում պարունակում են աղիքային վարակիչ հիվանդությունների հարուցիչներ:


Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակի մոնիթորինգ իրականացվել է ազգային ցանցում ընդգրկված 119 դիտակետում, այդ թվում՝ 25 շատրվանող հորատանցք, 35 չշատրվանող հորատանցք, 12 գրունտային ջրհոր և 47 բնաղբյուր: Դիտակետերում կատարվել են ջրի ծախսի, մակարդակի (ճնշման) և ջերմաստիճանի չափումներ ամսական 6 անգամ հաճախականությամբ:

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Հյուսիսային ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգ իրականացվել է 2 բնաղբյուրում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի և ծախսի չափումներ: Դիտակետերը գտնվում են Դիլիջան համայնքի Հաղարծին գյուղում:

N2059 դիտակետում ծախսի իջեցում է նկատվել, տատանումները կազմել է 0.09լ/վ: N2058 դիտակետում 0.03լ/վ-ով ավելացում է դիտարկվել:



Գծապատկեր 49. Հյուսիսային ՋԿՏ-ի բնաղբյուրներում ջրի ծախսերի փոփոխությունները

Ախտությանի ջրավազանային կառավարման տարածք

Ախտությանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 40 դիտակետում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի, ծախսի և մակարդակի չափումներ:

Ախտությանի ՋԿՏ-ի Արարատյան արտեզյան ավազանի հատվածում՝ Եղեգնուտի, Վարդանաշենի, Տարոնիկի, Ակնաշենի, Ապագայի չշատրվանող հորատանցքերում նկատվել են ջրի մակարդակների բարձրացումներ 0.03-0.33մ-ի սահմաններում: Արագափի N1537 հորատանցքում հակառակ պատկերն է, ջրի մակարդակը իջել է 0.16մ-ով: Բարձրացումներ են նկատվել Ապագա N2020 գրունտային ջրհորում, որտեղ ջրի մակարդակը բարձրանալով 0.25մ կազմել է -1.31մ, իսկ Լուսազյուղի N2022 ջրհորում կայուն վիճակ է:


Արմավիրի մարզի շատրվանող հորատանցքերից Ջրառատի N2021 և Ակնաշենի N2001 դիտակետերում ջրի ծախսի բարձրացումները՝ 0.26լ/վ և 0.09լ/վ-ով: Տարոնիկի N2002 և Գայի N1521 դիտակետերում նկատվել են ծախսերի, մակարդակների գրեթե կայուն վիճակներ:

Բամբակաշատի և Հայկավանի (N2024, N2025) դիտակետերում նկատվել են ստորերկրյա ջրերի մակարդակի բարձրացումներ 0.05մ և 0.04մ-ով:


Արարատյան դաշտի նախալեռնային գոտու Արագածավան N2080, Արտենի N2081, Արտամետ N2083, Մյասնիկյան N2082 համայնքների դիտակետերում դիտվել են ստորերկրյա ջրերի մակարդակների իջեցումներ 0.14-0.85մ-ով:

Գյումրիի N2029, N2030, N2031 և Աշոցքի աղբյուրներում դիտարկվել են կայուն վիճակներ, նկատվում են ծախսի աննշան ավելացումներ կամ իջեցումներ: Գյումրի քաղաքի N2037 և Մարմաշենի N2032 բնաղբյուրներում ծախսի իջեցումները տատանվել են մինչև 0.14լ/վ: Հակառակ պատկերն է N2077, N2035, N2038, N2039, N2040 դիտակետերում, այստեղ ծախսի բարձրացումները կազմել են 0.05-0.2լ/վ:


Ախտությանի N2043 գրունտային ջրհորում ջրի մակարդակը իջել է 0.52մ-ով՝ հասնելով -9.65մ-ի, իսկ Առափի գյուղի N2042 գրունտային ջրհորում մակարդակը բարձրացել է 0.15մ-ով:





Գծապատկեր 51. Ախտությանի ՋԿՏ-ի բնաղբյուրներում ջրի ծախսերի փոփոխությունները




Գծապատկեր 52. Ախուրյանի ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերում ջրի ծախսերի փոփոխությունները



Գծապատկեր 53. Ախուրյանի ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները



Գծապատկեր 54. Ախուրյանի ՋԿՏ-ի չշատրվանոց հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները



Գծապատկեր 55. Ախուրյանի ՋԿՏ-ի գրունտային ջրհորներում ջրի մակարդակների փոփոխությունները

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Հրազդանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 32 դիտակետում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը:


Հրազդանի ՋԿՏ-ի Արարատյան արտեզյան ավազանի հատվածում, Մասիսի N1519, Հովտաշատի N1523, Սիս N1536 դիտակետերում ծախսերն ավելացել են 0.03-0.13լ/վ սահմաններում, իսկ Հովտաշենի N2053, N2008 և Ջրահովիտի N2007 դիտակետերում ծախսերը իջել են 0.04-0.11լ/վ-ով: N1535, N1526

Սիս համայնքի N78, Հայանիստի N2005 դիտակետերում դիտվել են ջրի մակարդակի առավել կայուն վիճակներ, իսկ Ջրահովիտի N2004 հորատանցքում ջրի մակարդակը իջել է 0.22մ-ով:


Արարատյան դաշտի նախալեռնային գոտու՝ Աղավնատան N2087, Դողսի N2086, Փարպի N2119 դիտակետերում դիտվել են ջրերի մակարդակների նվազում 0.22-3.12մ, իսկ Լեռնամերձի N2088 և Արագածի N2085, հորատանցքերում նկատվել են անշան բարձրացումներ:

Հրազդանի ՋԿՏ-ի Կարբի N1636, Բջնի N246, Սուլակի, N1832 բնաղբյուրներում նկատվել են 0.2-1.95լ/վ-ով ծախսի բարձրացումներ: Երևանի N970 դիտակետում 0.4լ/վ-ով ավելացել է ծախսը և մարտ ամսին կազմել է 6.5լ/վ: Ղազարավանի N755 աղբյուրի ջրի ծախսը կայուն է՝ 2.9լ/վ, Սուլակի N1297 բնաղբյուրում նույնպես ծախսը անփոփոխ է մնացել:


Ապարանի N2051 և N2107 դիտակետերում նույնպես դիտվել են ծախսերի իջեցումներ մինչև 0.4լ/վ: Նիգավանի N2011 դիտակետերում մակարդակի իջեցում է դիտվել 1.2մ, իսկ N2010 ջրհորում կայուն վիճակ է դիտարկվել: Բյուրականի, Բուժականի N2108, N2105 դիտակետում նկատվել է ծախսի բարձրացում 0.07-0.39լ/վ-ով:




Գծապատկեր 56. Հրազդանի ՋԿՏ-ի բնաղբյուրներում ջրի ծախսերի փոփոխությունները




Գծապատկեր 57. Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերում ջրի ծախսերի փոփոխությունները




Գծապատկեր 59. Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները





Պճապատկեր 58. Հրազդանի ՋԿՏ-ի չշատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները



Պճապատկեր 59. Հրազդանի ՋԿՏ-ի գրունտային ջրերում ջրի մակարդակների փոփոխությունները

Սևանի ջրավազանային կառավարման տարածք

Սևանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 15 դիտակետում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի, ծախսի և մակարդակի չափումներ:



Սևանի ՋԿՏ-ի N31, N902, N1809, N1810, N2101 դիտակետերում շարունակվել են ջրի մակարդակների և ծախսերի իջեցումները մինչև մարտ ամիսը:

Ակունքի N31 և N902 բնաղբյուրներում մարտ ամսից դիտարկվել են ջրի ծախսերի ավելացումներ 14.7-19.0լ/վ-ի սահմաններում: Ակունքի N1053 դիտակետում ծախսի ավելացում է նկատվել 0.2լ/վ-ով:


Վարդենիս, Վաղաշեն, համայնքների N1809, N1812, N2090 շատրվանոց հորատանքերում և Խաչաղբյուրի N2093 բնաղբյուրում դիտվել են ջրի մակարդակների և ծախսերի բարձրացումներ, իսկ Վարդենիսի N1811 դիտակետում դիտվել է համեմատաբար կայուն ռեժիմ: Դարանակ N2095 շատրվանոց հորատանցքում և Լիճքի N2101 բնաղբյուրում նկատվել են թույլ իջեցումներ:

Գանձակի N2013 դիտակետում աղբյուրի ծախսը ավելացել է չնչին քանակությամբ՝ 0.09լ/վ: Գավառի N2014 և Աղբերքի N2091 բնաղբյուրներում նկատվել է կայուն վիճակ:


Լիճքի N2101 հորատանցքում ջրի մակարդակը շարունակվել է իջնել՝ հասնելով երկրի մակերևույթից ցածր 1.58մ-ի (փետրվար ամիս), իսկ մարտ ամսին բարձրացել է 0.12մ-ով:



Գծապատկեր 60. Սևանի ՋԿՏ-ի բնաղբյուրներում ջրի ծախսերի փոփոխությունները



Գծապատկեր 75. Սևանի ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերում ջրի ծախսերի փոփոխությունները



Գծապատկեր 61. Սևանի ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները

Արարատյան ջրավազանային կառավարման տարածք

Արարատյան ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 23 դիտակետում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի, ծախսի և մակարդակի չափումներ:



Գառնի համայնքի N2045, N2046, N2047 աղբյուրներում դիտվել է ծախսերի նվազում 0.01-0.33լ/վ, իսկ N845 դիտակետում ջրի ծախսը բարձրացել է 0.13լ/վ-ով:

Կեչուտ, Ջերմուկ N2060, N2048 բնաղբյուրներում ջրի ծախսերի աճը տատանվել է 0.84-1.78լ/վ-ով: Մալիշկայի, Ջեղեայի N502, N2050 դիտակետներում ծախսերի իջեցումները կազմել են 0.03-8.14լ/վ: Կայուն ռեժիմ է դիտվել Ագարակաձորի N785 դիտակետում: Եղեգնաձորի N787 դիտակետում ջրի ծախսը ավելացել է 0.64լ/վ-ով:


Արարատյան դաշտի հարավ-արևելյան հատվածի՝ Լուսառատի, Արարատի, Եղեգնավանի N2074, N2076, N2065 հորատանցքերում և N2075 գրունտային ջրհորում մակարդակներն իջել են 0.08- 0.25մ-ով, Սուրենավանի շատրվանող հորատանցքի ծախսը նվազել է 0.3լ/վ-ով: Հակառակ պատկերն է Վեդիի N2006 հորատանքում, որտեղ ջրի մակարդակը բարձրացել է 1.7մ-ով, ինչը պայմանավորված է Վեդի գետի վարարումներով:

Արտաշատի N2062, Դալարի N2063 շատրվանող հորատանցքերի դիտակետներում ջրի ծախսը ավելացել է 0.04-0.08լ/վ-ով: Մրգավետ և Արտաշատ համայնքների N2052, N2064 հորատանցքներում մակարդակները իջել են 0.06մ-ով, իսկ N2069 դիտակետում նկատվել է մակարդակի բարձրացում 0.36մ-ով:


Դալար գյուղի N2072 գրունտային ջրհորում նկատվել է մակարդակի բարձրացում 0.23մ-ով, աննշան բարձրացում է դիտվել Արտաշատ քաղաքի N2073 դիտակետում 0.07մ-ով:




Գծապատկեր 63. Արարատյան ՋԿՏ-ի բնադրյուններում ջրի ծախսերի փոփոխությունները




Գծապատկեր 64. Արարատյան ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները



Գծապատկեր 65. Արարատյան ՋԿՏ-ի շատրվանոցի հորատանցքերում ջրի ծախսերի փոփոխությունները



Գծապատկեր 66. Արարատյան ՋԿՏ-ի չշատրվանոցի հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները





Գծապատկեր 89. Արարատյան ՋԿՏ-ի գրունտային ջրհորներում ջրի մակարդակների փոփոխությունները

Հարավային ջրավազանային կառավարման տարածք

Հարավային ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 7 դիտակետում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի և ծախսի չափումներ:

Հարավային ՋԿՏ-ի բոլոր բնաղբյուրներում, բացառությամբ Շաքիի N532 աղբյուրի, նկատվում է ջրերի ծախսի նվազման միտում:

Գորայքի, Սպանդարյանի և Գորիսի N529, N537, N899 դիտակետերում դիտարկվել է համեմատաբար կայուն վիճակ, իսկ Գորիսի N1399 դիտակետում ջրի ծախսը նվազել է 0.57լ/վ: Շաքիի N532 և Անգեղակոթի N1175, N1323 բնաղբյուրների ջրի ծախսը ավելացել է 0.21-1.49լ/վ-ով:



Գծապատկեր 67. Հարավային ՋԿՏ-ի բնաղբյուրներում ջրի ծախսերի փոփոխությունները